

Մ. ՄՅՈՒՇԵՅԻԿ

ԿԱՅԱ



ԱԶԳՆԵՐ—1936

36-K
C 21227

Մ. ՄՅՈՒՇԱԿԻ

19 NOV 1911

894-362

5-28

Կ Ա Յ Ա



ՀՅ - ԵՃԻՈՅ

Ա. Զ. Բ. Ն. Ե. Դ.

Ուսումնա—մանկավարժական բաժին
Բազու 1936 թ.

03.07.2013

Թարգմանեց Ա. ՅՐԽԱՆ
Խմբագրեց Թ. ՀՈՒՐՅԱՆ



60163-67

ՆԱԽԵՐԳԱՆԲ

Յեկեք բարեկամներ յես ձեզ մի կյանքից,
Մի այլ աշխարհից, մի տիեզերքից,
Բաց անեմ արյունոտ մի սրտամաշ բեմ:
Իջեք ո՛վ յերազներ, ո՛վ իմ միտք իջիր,
Կյանքի փթորկոտ ծովի հատակը
Այնտեղից թե հանես հասարակ քարը
Փոխարեն մի մարգարիտի կաթնածիր

—Վորպես քաղցր բերկրանք ընկերի, յարի,—
Դա յեւ մի աշխատանք ե, մի գործ ե բարի,
Կյանքում բարի գործը յերբերք չի կորչի:
Բաբախիր ո՛վ իմ սիրտ կաթիլ առ կաթիլ
Բոցավառվիր ո՛վ թուղթ, առկայծիր գրիչ:

Կայան

— Խնդրե՛լն ի՞նչ ե պետք.

(Ընկերներին)

Յերեխեք գնացեք, յես քիչ գործ ունեմ,
Բուլվարն ե մեր տեղը, այ ձեզ ասում եմ:
Կայան մեկ-մեկ ասաց դասատուն գրեց:

Ուսուցիչը

Նման յերգեր ելի ունե՞ս:

Կայան

Ի՞նչ գիտե՛նամ...

Ուսուցիչը

Լավ եգ մյուսները թո՛ղ, թող մնա վերջում,
Կայան, այժմ յես քեզ ունեմ այլ հարցում.
Ծնող, բարեկամ, ասա ի՞նչ ունես:

Կայան

Վաղո՛ւց, վաղուց նրանք թաղված են հողում,
Հետքն անգամ նրանց չեմ տեսել կյանքում:

Ուսուցիչը

Վճրտեղ ես ապրում, ի՞նչ գործ ես անում:

Կայան

Մի քիչ լավ չե բռնած գործիս անունը
Մի կերպ քարշ կգամ մինչև գարունը:

Ուսուցիչը

Դպրոցում լինելու չունե՞ս դու փափագ:

Կայան

Ա՛խ քեռի իզուր մի անի կատակ,
Մի տես, իմ դպրոցը փողոցն ե այս,
Առած ուսումս ել ձեզ շատ ե զնաս:
Յես թունդ սիրահար եմ կինո, թատրոնի,
Նրանց տեսնելու ո՞վ փափագ չունի:

Հսկա կոիմները, պայքարները գոռ,
Մարդուն հիշեցնում են անցյալը բոսոր
Ու բոցավառում են սրտերն անսովոր:
Դարձյալ անցյալ գիշեր „Իլլիս“ գնացի,
Գիտե՞ս ի՞նչեր տեսա, ի՞նչեր լսեցի,
Յես այնտեղ լսեցի շատ վսեմ խոսքեր
„Մ եմք լեռներին տիրող անեղ արքաներ“:
Յես ո՞վ եմ: Փողոցների արքա Կայան,
Կինոն ու թատրոնը սիրող, անբաժան:

Ուսուցիչը

Մի՞թե թատրոնը քեզ այդքան հուզում ե:

Կայան

Ինչ ե, իմ այս սիրտը քա՛նք ե, յերկաթ ե:
Մի՞թե յես ել մարդ չեմ մսից, արյունից,
Կյանքս չի փոթորկվում վշտից, կարիքից:
Մի որ ել վոտս ընկավ, տեսա „Այդինին“, —
Վոչ վոք չի մտածում եղ խեղճի մասին:
Ճիշտ վոր ինձ լացացրեց „Այդինը“ վշտոդ,
Դու յել, վոր տեսնեյիր կլայիւր անշուշտ
Ե՛հ... խենթ ե „Այդինը“ ճիշտ վոր յերեխա,
Գիշեր ու ցերեկ լացող յերեխա:

Ուզում ե վոխ առնել մեքենաներից,
Թո՛ղ թշնամիդ դողա քո պինդ բռունցքից:

Նա իրեն խաբում ե յերազով դատարկ,
Հաս իս Դովլաթ բեգը չի անում կատակ:
Ախ յես մատաղ լինեմ քաջ բոլշևիկին;
Վոր գերեզման դրեց անսիրդ հարուստին:

Ուսուցիչը

Դու վոր այդ գործերը լավ գիտես ի՞նչու
Փոխել թշվառ կյանքդ դու չես մտածում:

Կայան

Յես սեփական սիրտս չեմ կարող խեղդել,
Մի ցանց ե ընկել եմ, չեմ կարող յեղնել:
Մեկ ել բարեկամներ, ընկերներ ունեմ,
Նրանց հետ սուրբ յերգում ե ուխտեր ունեմ:
Ինչ վոր մի բան մեզ միշտ ուտում վորդի պես,
Կյանքս ե արաւ անցնում մութ ամպերի պես:
Ես ճամբի վերջն անխ, սարսափ ե, վրհ ե,
Բայց ես ել մի կյանք ե, ես ել մի գործ ե:

Ուսուցիչը

Մի քիչ գրապետ ես:

Կայան

Այո, քիչ ու միչ,

Ձթողին շարունակեմ իմ ընկերները:
Մի որ դիմացի այս մեծ փողոցում,
Մի յերեք միլիցա մեզ շրջապատում,
Քշում, առաջ գցած դեպի մանկատուն,
Տանում հանձնում մեզ, վորբերիս անտուն:
Դու գիտես, մարդիկ միշտ տեսակ-տեսակ են
Այտեղից առաջին փախավ Միշկան, են:
Մանկատունը դարձավ մեզ համար զնդան,
Ընկերներս բոլորը այդտեղից փախան:
Այնտեղ յերկու տարի կարգացի մի քիչ,
Չեմ կարող պատմել ձեզ բոլորը, մեկից:
Տեսա ընկերներս ինձնից են խռով,
Ծածուկ փախա յես ել մի մութ գիշերով:

Ուսուցիչը

Այ վորդի աշխարհը դու մի լավ գիտիր,
Յեկ, այս կեղտոտ կյանքից դու մի ձեռք քաշիր,
Բնավ մի յերևա ել նրանց աչքում:

Կայան մտածելով

Մի որ կորչելու յե կյանքս Միբիրում,
Ծանոթ եմ աշխարհին, գիտեմ թե ինչ ե
Արնոտ մի ասպարեզ սոսկումի բեմ ե:

Ուսուցիչը

Գիտես, դեհ հեռացիր, վերջդ ե սև մահ,
Լարիր ամբողջ կամքդ, մի ունենալ ահ:

Տես, յես ուսուցիչ եմ յեկ դու ինձ լսիր,
Արի քեզ դպրոց տանեմ, դու «չե» մի ասիր:
Այս կեղտոտ գործերին մի վերջ կդնես,
Այնտեղ յե՛վ կաշխատես, յե՛վ կսովորես:

Կայսուն

Թող մի մտածեմ:

Ուսուցիչը

Դե, լավ մտածիր,
Միայն թե խելք արա, և լավ մտածիր:
Ա՛ռ, ահա հասցես... ինձ մօտ յեկ վաղը,
Այնտեղ քեզ ցույց կտամ մեր նոր աշխարհը:
Կլինես նոր կյանքի մարդկանց շարքերում,
Նոր կյանքի համար քրտնիր անդադրում:

II

Դասատուն սպասեց բայց Կայան չեկավ,
Ասես իր ոգուտը դարձյալ չի՛մացավ:
Դասատուն սպասեց մի գիտի Կայան,
Խաբվել է նոր սիրով միշտ անիրական:

Դասատուն սպասեց դարձյալ մի ամիս,
Կայան ել չերևաց ու չեկավ կրկին
Ո՞՞՞վ եղու Կայան, մտածկոտ Կայան,
Խաբե՞ց դասատուին, խոսքն անիրական:
Տասնհինգ տարեկան ամեն բան գիտի
Ինչ հարց ել վոր տաս պատասխան ունի:

Վորսացին Կայային վարպետ գողերը,
Դարձավ մեծ գողերի Կայան՝ ընկերը:
Լավ յեկամուտ ունի, լավ ել փող ունի,
Հրճվում է մեր Կայան ապրում գողունի:
Քաղաքի հետ ընկած մութ անկյուններում,
Գիշեր-ցերկ նստած նա կարտ է յխաղում
Կեռ դալար մի փոքրիկ անգոր բարունակ,
«Լավ» ընկերների հետ հարբում շարունակ:
Բայց Կայան կարթնանա այդ ճահիճ կյանքից,
Նա իրեն կփրկի կեղտի հորձանքից:
Նրա մատաղ սրտում կա մի յերկվություն,
Այդ յերկվությունից ել սրտում տխրություն:
Գիտե, նրա կամքը պինդ է պողպատից,
Թե դոր այս աշխարհում ծանոթ մարդկանցից
Մեկն ասեր նրան Կայա, բավ ել,
Դիտեմ այդ ճամպով չեր գնա նա յել,
Կը ժպտալին նրան պայծառ գալիքներ,
Յե՛վ չեր հիշի նրան բանաստեղծն ել:
Այսօրվա մարդկանցից հեռու յե Կայան,
Գործը վերջացնելուց ցերեկն անխափան,
Գիշերը լուսացնում կինո, թատրոնում,
Յե՛վ տուն դառնալիս միշտ միտք է անում,
Տեսած պատկերների, անցքերի մասին,
Ցնցվում նրա սիրտը, միտքն ել միասին:
Այնտեղի անցքերը կանչում են միշտ, հար
Արի Կայա, լսի՛ր, դու յել մի ժարդ դառ:
Միտք է անում Կայան, նստած մտածում,
«Ինչքան լկտի յեմ յես» ինքն իրան ասում:

Կայան դեռ մանուկ, են մութ անցյալում,
Ապրել ե ազատ «Խզի» լեռներում:

Ստում են հայրը գյուղում չոբան եր:

Մի անգամ հոտից ծախեց յերեք գառ,

Կանչեց ընկերին բոլոր, հավասար,

Քեֆ արեց դիմացի սարերում հսկա,

Այդ բանը իմացավ աղան մոտակա:

Յերբ նրան հարցրեց, թե ի՞նչու համար....

«Ծախել եմ բաժինս» ասաց դիվահար:

Տեսել ե աղան հովիվին ըմբոստ

Մի գնդակ ճակատին մահաբեր, ընդոստ

Խփել ե սարերի են սեզ չոբանին:

Կայան մարդ դարձավ ծնվեց բոց ծովից,

Միայն սև որ տեսավ նա սև անցյալից:

Վոչվոք նրա մորը ձեռք չյերկարեց,

Ոգնության չհասավ թշվառ աղքատին,

Մովը նստեց վզին, նա շատ տառապեց

Թոքախտով մահացավ խեղճ վորբեայրին:

Կայան թշվառ ու վորբ, մնաց զոհերում,

Կորած յեղնիկի պես մութ անտառներում:

Այդ կյանքը Կայայի առաջին կյանքն եր,

Այդ թշվառ վորբուկի առաջին կյանքն եր:

Փոթորկոտ մի գիշեր, ձյունոտ մի գիշեր,

Նորից հավաքվել են մի գաղանի տան մեջ,

«Բարեկամ» վորբերը ուրախ, աներեր,

Ու կարո են խաղում վողջ գիշերն անվերջ:

Կայան

Սիրտս նեղանում ե, հերիք ե տղերք

Այսոր բավական ե, ել վերջացնենք,

Յեմ ուղիղ այս տեղից մենք թատրոն գնանք:

Միսկան

Լսիր գլուխ տարար հերիք ե Կայա:

Կայան

Գուցե կինո գնանք, ի՞նչ կասես Միշկա:

Միսկան

Կինոն, թատրոնից ել վատ,

Տես տաքացել ե մեր ժողովը

Տնւր բանկը:

Բանկիր Փոլադը

Փող հանիր:

Միսկան

Յերկար մի խոսիր,

Տնւր բանկը:

Փոլադը

Փող հանիր, շատ մի տաքանա:

Միեկան

Քեզ ասում եմ, տուր:

«Միեկան ասնուկ ե սվել»

Կոկորդը չորացել, լեզուն չորացել
Դուրս են թռել աչքերն իրենց կռպերից:

Փոլադը

Մի տաքանար այդպես, չեն վախում քեզներից, ,
Շրմխկ ... հանկարծ խփեց մի ուժեղ ապտակ
Սկսեց ժողովում աղմուկ — աղաղակ:

Շրմխկ ... և մի պղինձ ձայնեց են կողմից,
Ընկերներն են վրեժ հանում իրարից,
Փայլեցին դաշույններ, թունոտ դանակներ,
«Ախ զալում» հառաչով լսվեցին ձայներ:
Կատաղած կռվողներին անջատելիս հենց,
Դանակը սրտում մեկը գետին փռվեց:
Այժմ հավաքույթում մի մեծ հուզմուք կա,
Բայց մի կարծեք թե հաշտություն կգա:
Նրանք կատաղել են վոնց վոր եզ վարազ,
Փոլադը «կուշբազ*» ե, Միշկան ել «կուշբազ»:

Մի լար իմ սիրելի, իմ անգին Կայա,
Այդ ծով արցունքներից քեզ ոգուտ չկա:

*) «Կուշբազ» (թուրքերեն) աղաղակ պահող ծ. թ.

Քո ապագային սև քող ես քաշել,
Կրակն ես ընկել, հերիք, բավել ե ել:

Քեզ ել ե սպասում այդպես մի դանակ,
Քեզ ել ե սպասում սոսկալի վիճակ:
Դուք թեկուզ ծիծաղեք, զոհ լինեք կյանքից,
Տխրություն ե ծորում ձեր խնդությունից,
Դուք միշտ տառապում եք մահվան յերկյուղով
Ու ներսից քայքայվում սեփական ախտով:

Մահով վերջացած այն սև գշերից,
Այդ թշվառ կյանքի հետևանքներից,
Զգվանքով իր բունը յես դարձած Կայան
Տարվելով ե մի խորունկ, քախքր զգացման:

Հանկարծ ուսուցչին նա մտաբերեց,
Գլուխը յերհան իկ յերազով լցվեց:
Մարդուն յես խարեցի ու չգնացի,
Կյանքումս սոսկալի հանցանք գործեցի:

Հիշեց, իրար ջան ասող բարեկամներին,
Վերջն ել արյուն գոչող իր ընկերներին:
Հիշեց, իր աշխարհը, ու զգվանք զգաց,
Յեվ զգվանքը դարձավ բարկություն կասղած:

Հիշեց, նրա սրտում նոր հույս արթնացավ,
Վոսց վեր քաղցր յերազ, յեկավ անցկացավ:
Նրա այդ աշխարհը սոսկումի բեմ եր,
Դավ կար, ու մահ էար, ախ ինչեր, ինչեր...
Կայան ինքն իրեն մտածում, լալիս,

Սիրտը դող եր ընկնում անցյալն հեշելիս:
Նրան այդ թշվառության կապող թելերը
Տեսնես մի անգամ յէրբ կկտրվի,
Յէրբ վիշ կունենա դաժան տանջանքը —
Կայան այդ սև խմբից միթե կազատվի:

V

Կայա, իմ հեղ Կայա, դիվանար Կայա,
Յերազկոտ Կայա, իմ թշվառ Կայա:
Ու յերբեմն նա մահ ե ցանկանում,
Այս թշվառ կյանքից ինչ ե հասկանամ:
Չե՞ս վ փողոցների դու „արքա“ Կայա,
Ո՞վ հոգնած թևավոր, վերավոր Կայա,
Պետք է դու ձեռք քաշես քո սև անցյալից,
Ուղղիչ տան արժանի քո մուկ գործերից:
Պինդ փարվիր այդ քո նոր, նոր մտքերին
Տանջանքից, հոգսերից, ու չարչարանքից,
Ազատող գեղեցիկ այս լույս աշխարհին
Նոր սրտով, նոր հույսով փարվի, ով Կայա:

Յեկավ, դռներդ բաց ընկեր ուսուցիչ,
Քո վաղուց սպասած ես թշվառը հեգ,
Տար նրան դպրոց, առը թուղթ ու զրիչ,
Այս Կայան ուրիշ ե, նոր Կայան արեգ:
Դողացող ձեռքերով թակում ե դուռը,
Կայան նոր ե թողել մեր ուղղիչ տունը,
Մի թագուն զգացմունք կրծում ե նրան
Նրա դեմքն ե այրում ամոթի քուրան:
Բաց արեց դուռն ուսուցիչը հանկարծ,
«Այս ով ե» ասելով մնաց զարմացած:

Նա չճանաչեց Կայային անբախտ
Մի լավ նայեց վորբի դեմքին անվհատ:

Կայան

Յերևում ե ինձ դուք չեք ճանաչում,
Մեղքը ձերը չի, յես եմ մեղավոր,
Յես թշվառ Կայան եմ ինձ — չէք ճանաչում,
Ո՞ իմ ուսուցիչ մեծ ու բախտավոր:
Հիշում ես, անցել ե յերկու ձիւ տարի,
Չափազանց գեղեցիկ ու շատ հեշտալի,
Տաքուկ փայփայ նքով մի դարնանային որ
Ասիր, — «Այս աշխարհին դու մի լավ նայիր
Այդ կեղտոտ խմբից յեկ դու ձեռք քաշիր»:
Այժմ յերդում արել, բաժանվել եմ յես
Թողել ընկերներին կեղտոտ, աներես:

Ուսուցիչը

Վորդի դեհ քաջալերվիր ու կամքդ սանձիր,
Են ճահիճ աշխարհի սև սոսկումները,
Սեփական ձեռքովդ, խելքովդ ջնջիր,
Տես խորը նայիր, սովորիր կյանքը:
Վաղը յեկ, միասին դու, գնանք ինձ հետ,
Թող լուսավորվի ճամբատ առհավետ,
Յես քեզ կտանեմ մեր, խորհրդային
Նոր կյանքի դպրոցը աշխատանքային:

Տարիները քամի յեկան անցկացան
Փոխվեց ժամանակը դարն ել անվախճան:
Մի որ դարուն յեկավ, մի որ ել ձմեռ,
Կայան իր հին կյանքից բաժանվեց անդարձ:



Կայան, բարձրացավ կամքով անվհեր,
Դուրս յեկավ լուսավոր մի ուրիշ աշխարհ:

VI

Մի որ մի անկյունում մի քանի ընկեր
Դարձյալ անճշ անճշ վեզ ելին զցում,
Բոլորի դեմքերին սրտում ու ափեր, —
„Ջնյ“ ասում „Ջնյ“ անում ու իրար զրգռում:

Մատաղ հմայքում, ծաղիկ հասակում,
Դրանք թշվառության հեզ գոհերն են:
Խոլ հոգիներն պեղ թռիչքում,
Յեռացող անցյալի հիշատակներն են:

Կեղտոտ սովորության վտանքի տակին,
Անբաստ հողի նման հալչում են նրանք,
Կպած թշվառության անգուլթ փեշերին,
Դեպի սարսափ մահը գնում են նրանք:

Դրանց առաջնորդը ծանոթ Միշկան է,
Չինար բոյ, զանգրահեր մի սիրուն տղա:
Վանց վոր մի չար դեմ ամեն ինչ անող,
Ժայռի նման հսկա ու միշտ փաթորկվող:

Ահա նրանց մոտով մի մարդ է անցնում,
Թեմի տակ հաստափոր գրքեր է տանում,
Նրա կայծակի պես փայլող աչքերը,

Փայլուն ապագային նայող աչքերը,
Կայծկլտուն է յերկնի շողշողուն աստղից:
Հանկարծ Միշկան թռավ կանգնեց իր տեղից
— Այ տղերք, Կայան...

— Ո՛վ:

— Մեր Կայան,
Բոլորը զարմացած նրան նայեցին:
Գցած վեզը մնաց սառած իր տեղում
Բոլորի հիասթանչ անմար աչքերին
Մի զտրմանը դողաց, զարմանք անխնդում:
Ու լավեց հանկարծ մեծ գոռում-գոչում:

Միշկան վոնց մի թռչուն թև առավ իսկույն
Մոտ գնաց ընկերոջ, իր սիրար բացեց,
Ասաց „այ ջան“ Կայա, սիրելի Կայա,

Սրանք բոլորը քեզ ընկեր բարեկամ,
Դու տմարդությունից հեռ կնց բարեկամ,
Նորից յեկ տեսության մի փախչիր մեզնից,
Ի՞նչ ես ցանկանում քո ընկերներից,
Ասա, յեռ պատրաստ եմ:

Կայան

Շնորհակալ եմ ձեզանից Միշկա,
Մեր ուղին տարբեր է, լավ նայիր ահա,
Տես այժմ մեր միջև անդունդ է ընկած,
Յես ուրիշ կյանք ընտրեցի, ձեզնից բեզարած:

Եւ յերբեք յես ձեզ հետ չեմ հաշտվելու,
Յեմ ձեզ զաղտնիքներին չեմ խառնվելու:

Միշկան

Ի՞նչու:

Կայան

Դժվար է քո „ինչու“-յին տալ մի պատասխան,

Յեա ել ձեզ փոթորկող այս դժբախտության,
Թշվառ, տանջանից, մռայլ կեդտի մեջ,
Հող եյի տալիս անդադրում, անվերջ:

Ի՞նչեր չլսեցի, ի՞նչեր չտեսա,
Այնտեղ մարդկությունից մի նշույլ չկա:

Միեկան

Ազն ի՞նչ մարդկություն, մարդկությունը տե՛ս:
(Ձեռքով ցոլցց ե տալիս գրպանում յեղած փողը)

Կայան

Ձե, այդ մութ գործերին պետք ե վերջ դնել,
Այդ, վոր ցոլցց ես տալիս, դժւ յես աշխատել
Յերը գողանում եյիր մտածեցիր դու,
Վոր այդ փողը, գործից ճակատը քրանած,
Անցալում շղթայված տխուր դալկացած,
Հույսն ե տուն դարձող մի վորքեայրու,
Կամ ձեռքը կոշտացած մի տղամարդու:
Հիմա տանը նստած անիծում են քեզ
Սիրիր մոլությունը ինչքան ել կուզես
Տեսնենք ինչ կլինի քո թշվառ վերջը:

Միեկան

Այ Կայա
Այդքան նոր աշխարհիդ մի վստահանա,
Ես առտու ցանցիս մեջ ընկել եր մի «վորս»,
Կյանքում չեյի տեսել յես եղքան «չաղ վորս»,
Վերջը թալանեցի ու բաց թողեցի,
Միթե աշխարհն ել մի մեծ թալան չի:

Գուցե դուք այս խոսքը վաղուց մոռացել,
Յեմ այժմ մի ուրիշ ուղի յեք բռնել:

Կարճ ասած այս ել քաղցր մի հույս ե,
Այս ել իր տեսակի անուշ յերազ ե:

Հինգ որվա աշխարհում դու քեֆ արա, հեզ,
Վոչ վոք յերկրորդ անգամ չի ծնվի յերբեք:

Կայան

Ձեր արած այս քեֆը թույն ե դառնահամ,
Ուտում ե ձեզ ներսից, խորտակում անգամ,
Ի՞նչու անպետք ասենք հնդերայ կյանքին,
Մի որվա կյանքն իսկ փոխարեն մահին
Ըստ իս շատ թանգ արժե, ըստ իս քաղցր ե,
Կյանքը մի թեւովոր սիրուն թռչուն ե:

Ձեզ միշտ ուրախացնող հաճույք տվողն ել,
Ձեզ միշտ հարբեցնող, զվարճացնողն ել,
Կյանքում թփրտացող ցանկությունն ե, բայց
Այդ ցանկությունը կեղտոտ ե միշտ, թաց:

Յերը մութն ի՞նչի մեր այս աչքերին
Ընկերներ մենք իրար քենով պիտ նայենք
Դժվար կբաժանվենք մենք այս աշխարհից
Շողշողուն աշխարհից, փառքի աշխարհից:

Միեկան

Կայա, հիշում ես անցյալում դու յել,
Մեզ հետ միասին քեֆ եյիր քաշում,

Ու միշտ մեզ համար քաղցրալուր յերգում:
(Կայան տխուր մտածում է)

Ի՞նչ ես մտածում դու այդպես սառած,
Մի՞նչ ե հիշեցիր:

Կայան

Վնչ,

Միեկան

Սպասիր
Մի կանչեմ, թող յերգի Ձանգուշ Մուրադը:

Մուրադը — (յերգում)

Ողբ անուշ որը բարի
Անգուլթ վորսկանը յելավ վորսի...

Միեկան

Սիրելիս եդ մի թող, ես մյուսը յերգի
Այժմ այդ յերգը յես չեմ հավանում:

Կայան

Ինչու դուք այդ յերգին միշտ խորթ եք նայում,
Տեսնում եմ ձեզ միայն դատարկ աշխարհում,
Հետաքրքրում ե մահադուլժ խոսքը
Հետաքրքրում ե արյունոտ յերգը:
Այդպես ե:

Միեկան

Սիրելիս այդպես ե, այն ճիշտ այդպես,
Թե որս չի անցել վարար գետի պես,

Աշխարհն ընդարձակ նեղ ե իմ գլխին,
Կարծես գարուններս ձմեռ ե մի՞թին:
Յերգիր Մուրադ յերգիր, ես մեկը յերգիր,
Ննջան ել դուր չեկավ եդ յերգդ սրտիս:

Մուրադը

Յես մի թռչուն անհայրենիք,
Ձունեմ սիրող ու անձկալիք,
Ո՞վ ե հայրս, ո՞վ ե մայրս,
Այս աշխարհում, այս աշխարհում, —
Դարդի ձեռքից եմ հալածվում:

Մի տղա յեմ շատ համարձակ,
Թեիս տակին արնոտ դանակ
Ընկերներս ինձ կծախեն
Այս աշխարհում, այս աշխարհում
Դարդի ձեռքից եմ հալածվում:

Կայան

Այո ընկերդ ե, վոր քեզ կծախի,
Մատաղ սրտիցդ արյուն կքամի
Դուք ձեր ներսից ե վոր միշտ պիտի փախի
Ու ձեր կուրծքը պողպատ պիտի փշրվի:

Վաղը պիտի փայլի արնոտ դաշույնը,
Ձեզ պետք ե պարփակի դատարկությունը,
Ձեր բռնած այս ուղին սոսկալի ուղին
Ձեզ հասցնելու յե յեզրը անդունդի:
(Կայան ձեռք ե տալիս ու տխուր բաժանվում)

(նրանցից մեկը)

Տղերք դեսը յեկեք, ծուղակ ե լարում,
Կայան միշտ մոլլային ե յերկրպագում:
Պուր ել հանցանք գործած յերեսին նման
Դողում եք նրա մոտ տերևի նման:
(Միշկան Կայայի հետեից կանչում ե)
Հինգորդա այս աշխարհում դու քեֆ արա քեֆ,
Վոչ վոք յերկրորդ անգամ չի ծնվի յերբեք:

VII

Շատ անգամ քաղաքի լայն փողոցներում,
Յերբեմն հերթերի խիտ-խիտ տեղերում,
Հենց նույն Միշկաներն են, ճամբով անցնելիս
Ընթերցող ուշադիր մի լավ կնային:

Բոլոր մութ բեմերում դեր ունին նրանք,
Կյանքի յեռուն սրտում «վխտում» են նրանք,
Նրանք մեր լեզուն հաշվում են ճգճիմ,
Իրենց լեզուն ունեն գաղանի խաբուսիկ:

Միկիչ ե Միշկայի անունն իսկական
Բոլորը ծանոթ են նրա այդ անվան
— Միշկան ապրում ե զաղանում դուր,
Նեղ նրբանցքներում յեռուն քաղաքի:

Նրա մանուկ որը այսպես ե անցնում,
Նա կամ բռնվում ե և կամ ել ծեծվում,
Մի անգամ նրան նորից բռնեցին
Յեվ ուղիղ մոտակա մանկատուն տարին:

Պահելն անհնար եր այդ գիծ վորբուկին
Կոտրեց նա «վանդակը» ու փախավ կրկին

Իր անգին կյանքը նա նորից գցեց
Դատարկ աղատության սև ցեխերի մեջ:

Փողոցի վորբերին գլխին հավաքեց.
Նրանցից մի քանիսը նրան չլսեց:
Նրանք ուսում առան հայտնի մարդ դարձան,
Իրենց համար ազատ ճանապարհ գտան:

Ընթերցող ասածներս քեզ սուտ չթվան,
Ոհա քեզ որինակ իմ հերոս Կայան:

Այժմ ապրում ե մեր Միշկան հայտնի,
Նա Կայայից մեծ ե մի քանի տարի
Նրանց ճանապարհը վաղուց ե բաժան,
Մեկը ուսանող ե, իսկ մյուսը խուժան:

Դարձյալ ժանտ Միշկայի արյունն ե հորդել,
Թռել յետ չի յեկել սիրուն աղափին,
Գույնը վոնց սերկևիլ գունատվել դեղնել,
Վրեժը՝ մի չար դեմ չոքել ե սրտին:

Այս որ լուր իմացավ թե «այս ինչ տեղում»,
Վազեց ուրախացած գեպի այն կողմը,
Նրա ջան թռչնակը ոտարի ձեռքում,
Գիտի իրան չի տա նրան գտնողը:

Միջևն

Իմ սիրուն աղափին ձեզ մոտ ե՞ յեկել:

Փոխադր

Այն քո աղափին մեզ մոտ ե յեկել:

Միեկան

— Տվեք:

Փոլադը ահա քան, քան, ծիծաղում
Միշկայի սրտից արյուն է կաթում:

Միեկան

— Մի խնդա կնոջ պես, տո՛ւր ինձ աղափին:
Այս խոսքը դիպչում է Փոլադի պատվին:

Փոլադը

Շուտ կորիր այստղից առաջդ ե մահը:

Միեկան

Այն դու պարծենկոտ մոռացար ահը,
Մի կտորատվիր հիմար, քիչ խելոք խոսիր
Թեկուզ քամի լինես ձեռքիցս չես պրծնիր:

Փոլադը

Մի տուր լեզվա-կռիվ, դե՛հ կորիր դնա:

Միեկան

Յեկեյ եմ նամարդ ինչ կարաս արա:

Փոլադը

Արյուն կա աչքերիդ, գլխիցս կորի՛ր:

Միեկան

Շատ յերկար մի խոսի, դե՛հ մեյդան արի:
Փալադի աչքերը վոնց վոր մի բորբ բոց,
Դաշույնը սեղմ ձեռքում հանում կայծկլտոց,

Ան՝ ահա աղափիդ, առ, սրանից դեն
Նա քեզ հյուր կլինի ցուրտ շերմիդ արդեն:

Մեխվեց դանակը ճիշտ Միշկայի սրտին,
Նա գոհ դարձավ իր թանկագին թռչնին,
Միշկան շուտ հիվանդանոց փոխադրվեցավ,
Հենց այնտեղ աշխարհը աչքին սևացավ:

Այն ո՞վ է Միշկայի գլխավերևում,
Ինքն իրեն ամպամած քայլում ու խոսում,
Միրտը բաբախում է և աչքերը թաց
Հոգին ալեկոծված միտքը բորբոքված:

Են ո՞վ է իսկապես տխուր սգավոր
Հազին յերկար խալաթ ու ճերմակավոր
Փորձի յեկած այդ վեհ ուսանողն ո՞վ է
Նա մեր Կայան ե.— Ընկեր բժիշկն է:

Կայա այս յերեկոն քեզ շատ է տխուր,
Արդյո՞ք ինչ ես մտածում, խորհում նորանոր,
Դարձյալ տարվել ես դու խոր-խոր յերազում,
Կյանքի վրձն բեմերն են այդպես քեզ հուզում:

Գլուխը ուսերին շատ է ծանրանում,
Տխուր ման է գալիս նա այդ սենյակում,
Ծխում է անդադար ծխում, միշտ ծխում
Հուշեր է արթնանում յերազներ սրտում:

Այդ սև յերազը, իր նախկին ուղին է,
Կարծես թե նրան ասելիք ունի,
Սոսկալի անցյալը նրան պատմում է,
Մշուշ է իր դեմքը վերջին աշունի:

Անցյալի հուշն ե գցել այս վիճակի մեջ,
Իմ սիրով փայփայած հերոսին այս հեզ,
Ի՞նչու նա յե ընկել տխուր ալյաց մեջ,
Այս նոր աշխարհի արծիվը արեգ:

Այ Կայա քո անվան ել սաղական չի,
Այդ հուսահատության դառն մտքերը
Թող դու, լքումից, վշտից ձեռք քաշի,
Քեզնից հեռու լիսեն մուկ յերազները:

Յերազի լճերում մի հողմիւր յերբեք,
Տանջանք ե յեղել դառը անցյալդ,
Անցյալի հուշերից մի տանջվիր յերբեք,
Ձեռքումդ թող կիսատ չմնա գործդ:

Վեր կաց սիրողներիդ սիրտդ բաց արա,
Յերջանիկ ապագան քեզ ե սպասում,
Կառուցած նոր աշխարհիդ արգելք չեն լինի
Միշկաները, վոր ներսից են փթում:

Վերջաբան

Ո՛վ իմ վաղ մանկության անբախտ ընկերներ,
Յեա ել հենց ձեզ նման յերկար տարիներ
Ովկիանոսներում անգլուխ թշվառ,
Ահեղ ալիքներում անոգուտ ու հար,
Մի հեզ մակույկ եյի, անզոր դողացող,
Անհոգ մի ուղեւոր, անվերջ թափառող:

Վոչ հայրական սեր, վոչ մոր գուրգուրանք,
Յեւ վոչ ել նրանցից քաղցր փաղաքշանք,
Դրանցից վոչ մեկն ել չտվեց ինձ բույր,
Իմ մանուկ շրթները չտեսան համբույր:
Ա՛խ ինչեր չանցկացան իմ մանուկ գլխով,
Մուկ ամպեր անցկացան իմ մանուկ գլխով:
Մի առավոտ յես ել գնացի դպրոց,
Կարմիր հոկաեմերը ինձ առավ իր ծոց...
Ել ի՞նչու նայենք մենք, մեր մուկ անցյալին,
Վողջճէյն գալիքի նոր Կայաներին:





Istehsalata verilmiş 10/1-36

Çapa məzalanmış 22/11-36

Baş Mətbuat Mədirliyi Məvəkkilliyi № 62

Çap listi 2. Kağız formatı 82×110¹/₃₂

Azərbayc № 5

Tiraj 1500. Sifariş № 24

Azərbayc mətbəəsinə əsaslandı, 26-lar adına „Kitab Sarayı“,
Bakı, Əli Bəyramov küçəsi.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿՈՄԻՏԵ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿՈՄԻՏԵ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿՈՄԻՏԵ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿՈՄԻՏԵ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿՈՄԻՏԵ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿՈՄԻՏԵ

ՀՀ Ազգային գրադարան



NL0385901

50 qəp.

73 788

540

C 36-1
C 122

M. MUŞFIK

KAJA

AZƏRNƏŞR
Tədris-Pedaqoji Şöbəsi
Bakı—1936

Muşfik, Kaja

894.362

17-28